GABRIELYAN GUZH 3901890254
Digitally signed by GABRIELYAN GUZH 3901890254
Date: 2022.10.19 10:00:24 +04'00'

Ուսումնական հաստատության դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր

Տավուշի մարզ գյուղ Չինչին

Չինչինի միջն. դպրոց ՊՈԱԿ

11-րդդասարան դասղեկ՝ Անահիտ Վրեժի Գաբրիելյան

2022-2023 ուս. տարի

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն /դասարանի ընդհանուր բնութագիրը/

11-րդդասարանում սովորում են թվով երկու աշակերտ՝ Անտոնյան Հարություն Ա, Դարինյան Մանե Զ.:Դասարանը համերաշխ է, ձևավորված է կուռ կոլեկտիվ:Գործում է փոխըմբռնման մթնոլորտ, հանդուրժող են, ընկերասեր:Միջին ընդունակությունների տեր աշակերտներ են:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները.

Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին, ուսման առաջադիմությանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ, մաքրություն, անձնական հիգենա, համագործակցություն, փոխօգնություն:Հիմնական նպատակը դպրոցում միասնական դաստիարակչական միջավայրի ստեղծումն է:

3. Հայեցի դաստիարակություն.

3.1-Հոգևոր դաստիարակություն.

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Ներկայացնել հայկական մշակույթն ու հոգևոր պատմությունը, խթանել զգալու իրենց հոգևոր արժեքները:

3.2-Գեղագիտական դաստիարակություն.

Հնարավորություն է ընձեռնում բացահայտելու գեղեցիկի բնույթը արվեստում, շրջակա կենսամիջավայրում, մշակելու գեղեցիկի չափորոշիչները, սովորեցնելու տեսնել գեղեցիկը հասարակության արժեքային համակարգում:

3.3-Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն.

Այն ուղղված է մատաղ սերնդի հայրենիքին նվիրվածության ու հավատարմության քաղաքացիական պարտքի ու հայրենասիրության դաստիարակմանը: Առաջնորդվում ենք ՛՛ինձնից է կախված իմ ազգի ու պետության ապագան՛՛ կարգախոսը:

3.4-Ֆիզիկական դաստիարակություն.

՝՝Ֆիզիկական կուլտուրան մարդու բազմակողմանի, ներդաշնակ զարգացման կարևորագույն տարրն է՝՝/Վ. Սուխումլինսկի/: Ֆիզիկապես կոփված և բարոյապես կայուն սերունդը ապահովում է հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության կազմավորումը:

3.5-Աշխատանքային դաստիարակություն.

՝՝Աշխատանքի նյութական պտուղները կազմում են մարդկային ունեցվածքը, սակայն կենարար ուժն է ծառայում որպես մարդկային արժանապատվության աղբյուր /Ուշինսկի/: Հիմնական խնդիրը երեխայի մոտ աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքն է:

3.6-Բնապահպանական դաստիարակություն.

Բնությունը զարգացնում է սովորողների երևակայությունը, դիտողունակությունը: Պետք է դաստիարակել այնպես, որ երեխան ընկալի բնության հմայքը, գեղեցկությունը, լինի գեղագիտական արժեքների կրողը, ունենա իր սեփական ներդրումը բնապահպանության գործում:

4.Դպրոց-ընտանիք կապը.

Համագործակցային առողջ մթնոլորտում դպրոցի և ընտանիքի պահանջները միասնական են, հիմքում ընկած է նպատակաուղղվածության սկզբունքը: Փոխադարձ վստահությունը, հարգանքն ու օժանդակությունը օգնում են համատեղ ջանքերով երեխայի դաստիարակմանը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը.

Ուս/շ	**Ուս.աշխատանքի բովանդակությունը**
1	Ձևավորել դասարանական ակտիվը: Ինքնաբնութագրում - ՝՝իմ տեղը դասարանական կոլեկտիվում՝՝:
2	Խաղաղության մշակույթ:
	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:
4	Համավարակից պաշտպանվելու կանոններ:
5	Հայրենիք, ազգ, մայրենի լեզու: Ինչքանով ենք պատրաստ պահպանելու մեր ազգային որակները: Քո աշխատանքն անգնահատելի է ուսուցիչ:
6	Հոգու կրթություն և մտքի թռիչք:
7	Ոսկե աշնան գույներն իմ խոհերում:
8	Հայրենիքն սկսվում է սահմանից:
9	Կրթության գերագույն արժեքը հանդուրժողականությունն է:
10	Բարոյական արեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը:
11	Ով է հոգեպես հարուստ իմ կարծիքով:
12	Մարդկային արատներ:
13	Համակարգիչն իմ կյանքում:

14	Դժվարություններ, որոնց բախվում եմ:
15	Մասնագիտությունների աշխարհ:Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները:
16	Մեր անունն է Հայկական բանակ:
17	Հայը պետք է ապրի և արարի:
18	Սիրել, նշանակում է...
19	Պատվիրանների խորհուրդը:
20	Նյութապաշտություն և շահ: Անշահախնդիր նվիրում:
21	Ճշմարտապահություն խոսքում և գործում:
22	Գնահատիր ժամանակը:
23	Հաղուրժողականություն և բարություն:
24	Աշխարհընկալում, փոխըմբռնում: ես հարգում եմ նաև քո կարծիքը:
25	Ուժը միասնության մեջ է :
26	Արիությունը ծնվում է պայքարում:
27	Այսօր ինքնաքննադատության օրն է... համարձակ եղիր:
28	Ում կուզեի նմանվել:
29	Ծնողական հոգատարություն և դաժան վերաբերմունք:
30	Արտագաղթը չարիք է:
31	Նժդեհին ընթերցելով:
32	Պատերազմով խաթարված պատանեկություն:
33	Իմ ձեռքբերումներն այս ուսումնական տարում:
34	Դպրոցական վերջին զանգի խորհուրդը: